

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ
(ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Աելիտա Դոլուխանյանի
ծննդյան 70-ամյակի առթիվ)

Աելիտա Դոլուխանյանի կենսամատենագիտությունը կարող է մի ամբողջ գիրք դառնալ և լավագույնս բնութագրել նրան իբրև գրականագետի, բանասերի, դասախոսի, ուսումնական ընթացքի կազմակերպչի, հայ գրական կյանքի ակտիվ



մասնակիցներից մեկի, մի մարդու, որն անհրաժեշտորեն կոչված է հենց այս ասպարեզների համար: Սրանցից յուրաքանչյուրում նա դրսևորվել է լիաձայն ու նպատակադրված փորձելով պատասխանել թե՛ գիտական և թե՛ լուսավորչական կարևորագույն խնդիրների, մինչև իսկ իր գլխավոր՝ հայ միջնադարյան գրականության վերլուծաբանության ասպարեզում է նա հետևում արդիականության պահանջներին՝ գրական անցյալի ու պատմության արդիականությանը: Անցյալ-ներկա առնչություններն անբաժան են Դոլուխանյանի գիտական հետաքրքրությունից, իր յուրաքանչյուր աշխատանքում նա ցույց է տալիս հին ու նորի էական կապվածությունը, դրանք փոխներթափանցված են, տարբեր ժամանակները նույն հոսող գետն են, թվականներն են փոխվում, մենք գտնվում ենք միևնույն, մեր դեպքում ժայռոտ ավերով գետի մեջ, որ մեր միասնական մշակույթն է:

1987 թ. Դոլուխանյանը լույս ընծայեց «Հոգու և մարմնի պրոբլեմը միջնադարի հայ քնարերգության մեջ» ուսումնասիրությունը, կարևորագույն մի խնդիր, որը մինչ այդ մեզանում ոչ ոք չէր քննարկել: 2008-ին գիրքը տպագրվեց ռուսերեն և մոսկովյան «Լիտերատուրնայա գազետայում» արժանացավ ռուս մասնագետի բարձր գնահատականին: Գրքի և նրա հեղինակի արժևորմամբ հանդես եկան մեր երախտավորներ Արշալույս Ղազինյանը, Պողոս Խաչատրյանը, այլը, հայոց ակադեմիայի գիտական պարբերականները: Այս երկի շնորհիվ հեղինակը կանգնեց բանասիրականների նոր սերնդի լավագույն ներկայացուցիչների շարքում՝ իր եռանդուն ու անշփոթելի ներկայությամբ:

Գրող կարելի է դառնալ և ինքնակրթությամբ, այսպես կոչված կյանքի համալսարանների միջանցքներն անցնելով, թեև, կարծում եմ, ինքնաբերականորեն սովորաբար հնարավոր չէ շատ բարձր և հեռու թռչել առանձին հաջողված օրինակները դեռ օրենք և օրինաչափություն չեն, այնինչ գիտնականը պիտի դպրոց անցնի, և լուրջ դպրոց, իրենից հասուն դառնա, իրենով դպրոց բովանդակավորի ոչ ավելի և ոչ պակաս ակադեմիական մակարդակով, և այն գրողներն ու արվեստագետները, որոնց թևերը

կոչված են թռչելու, յուրահատուկ ակադեմիա են և ճշմարտություն են ուսուցանում, իմաստություն ու խրատ: Ա. Դոլուխանյանը ոսկե դպրոցական էր և ոսկե ուսանողուհի Երևանի պետական մանկավարժականում, որտեղ հետագայում դարձավ հայ գրականության ամբիոնի երկարամյա վարիչը՝ իր ազատամտությամբ զգալիորեն ազատականացնելով դասավանդման բովանդակությունն ու մեթոդիկան: Իբրև գիտնական՝ նա ձևավորվեց հայ դասական բանասերների ու գրականագետների, պատմաբանների ու մշակութաբանների դպրոցներում, որոնց հատուկ էր հայոց ազգային ֆենոմենի խոր ըմբռնումը, Մատենադարանը դարձավ նրա երկրորդ, գուցե և առաջին անփոխարինելի հանգրվանը, որտեղ առ այսօր լինում է բուհական աշխատանքից ազատ յուրաքանչյուր օր և ժամերով գրուցում ձեռագրերի ու մատյանների հետ («Օ՛, գրքերի աշխարհը, տիեզերք է անեզր»), նրան գիտնական օձեց տաղանդավոր հետազոտող և ուսուցիչ Ասատուր Մնացականյանը, որի ասպիրանտը և համախոհը եղավ: Այս ամենն Ա. Դոլուխանյանին սովորեցրին ինչպես և դեպի ուր նայել:

Մեծն Մանուկ Աբեղյանի գիտական ժառանգությունն աչքի է ընկնում երկու արմատական հատկանիշով՝ բանասիրական և գրականագիտական, որոնք մեկտեղված են և ունեն միաժամանակյա ընթացակարգ: Կարծում եմ, միայն այս եղանակով կարելի է ժամանակակիցներիս ամբողջականորեն ճանաչելի դարձնել հայոց՝ հատկապես հնագույն ու միջնադարյան գրականությունը և դրանց հեղինակներին: Այս համադրական մեթոդաբանությունը, որ Աբեղյանի ծանրակշիռ նորարարական ներդրումն է հայ բազմադարյան գրականության ուսումնասիրման ասպարեզում, շարունակեցին նրա հետևորդները, նրանց թվում և դոկտոր, պրոֆեսոր Ա. Դոլուխանյանը, որի բանասիրական և գրականագիտական մոտեցումները շատ աշխատություններում հնարավոր չէ իրարից տարանջատել, դրանք միասնական վերլուծաբանություն են: Մա հնարավոր չէր դառնա, եթե Ա. Դոլուխանյանը չլիներ նաև զգայուն բանասեր և զգայուն գրականագետ: Առաջինն արտահայտվել է նրա գուտ բանասիրական, գրականագիտական և տեքստաբանական գրքերում («Տելիքս Նևր և նրա քրիստոնեական հայ մատենագրությունը», «Ներսես Մոկացի, Բանաստեղծություններ, աշխատասիրությամբ Ա. Դոլուխանյանի», «Խաչատուր Կեչառեցի, Տաղեր, աշխատասիրությամբ Ա. Դոլուխանյանի», «Հայ ժողովրդական բանահյուսության նյութեր», «Եվրոպացի հայագետները Մաշտոցի և հայոց այբուբենի մասին») և բազմաթիվ հոդվածներում («Ներսես Մոկացու անտիպ «Ողբը», «Էպոսի առաջին գրառումը», «Հայ գրականությունը լեհահայ գաղութում» (լեհերեն), «Գրիգոր Լուսավորչի Տեսիլի օտար աղերսները», «Ն. Շնորհալու «Վարդանանց» շարականը», «Դիոնիսիոս Արիոպագոս «Երկնային քահանայապետությունը» Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռագրերում» և այլն): Հիանալի իմանալով մեր գրականության հազարամյա դաշտը, նրա գրաբարը, միջին հայերենը, բարբառներ, ժամանակակից հայոց լեզուն՝ իր երկու ճյուղերով, Դոլուխանյանը հաճախ որոնում է այնպիսի խնդիրներ (հատկապես միջնադարյան գրականության մեջ), որոնք քիչ են լուսաբանված կամ ամեննին լուսաբանված չեն՝ վկայություն նրա անընդմեջ հետաքրքրասիրության: Օրինակ, Նարեկացու «Մատյանի»

և բյուզանդական միստիկ Միմեոն Նոր Աստվածաբանի հիմների զուգահեռումը ցարդ չի արվել ոչ մեկի կողմից (տե՛ս «Литературные параллели, Москва, Российская академия наук, 2010»):

Ա. Դոլուխանյանի գրքերը և շուրջ 300 հոդվածները, որոնք վերաբերում են մեր գրականության տարբեր շրջափուլերին, նաև ունեն ազգային-քաղաքացիական ուղղվածություն: Հոդվածներից մեկի վերնագիրն է. «Առանց հայ գրականության պատշաճ ուսուցման անհնար է կատարյալ ազգային դաստիարակության իրականացումը մերօրյա դպրոցում»: Այդ պատշաճն իրականացնում է և Ա. Դոլուխանյանը իր գիտական հետազոտություններով և ամենօրյա դասախոսություններով ու ելույթներով: Այս հավատամքն այսօր ունի բարոյական շատ կարևոր խորհուրդ, երբ մեր ժամանակն իր շավիղից ամեն առումով դուրս է սայթաքել՝ մեր հայրենիքն ու ժողովրդին կանգնեցնելով դժխեմ բախտի առջև:

Մասնակցելով բազմաթիվ գիտաժողովների Հայաստանում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Վրաստանում՝ նա, գրական հարցերի արծարծմանը զուգահեռ, դաստապաշտպանություն է արել ընդհանրական մշակույթին և հայ ժողովրդի պատմությանը, փաստարկել կարևոր ճշմարտություններ, օտարներին ցույց տվել մեր հոգևոր բովանդակության միջազգային նշանակությունը: Նույնին ձգտել է նաև օտար լեզուներից արված իր թարգմանություններով: Այս ասպարեզում մեզանում ուշագրավ գիտական նորություն եղավ Ավեստայի «Վենդիդատ» գրքի երկու հատվածների թարգմանությունը ֆրանսերենից, որոնք լույս տեսան մեր ակադեմիայի «Լրաբեր հասարակական գիտությունների» և «Պատմաբանասիրական հանդես» պարբերականներում: Ա. Դոլուխանյանն ամենօրյա հետաքրքրությամբ է վերաբերում այն օտար գրական-գիտական հուշարձաններին, որոնք առնչվում են հայերիս հոգևոր երևույթի հետ: Նարեկացու և բյուզանդական Միմեոն Նոր Աստվածաբանի զուգահեռն արդեն նշել եմ: Սրանք միակը չեն, այլ մի քանիսից ամենաէականները, որ մեզանում առաջին անգամ Դոլուխանյանն է գիտական շրջանառության մեջ դրել: Այստեղ հիշատակեմ նաև «Պատմության վկայությունը. ուշագրավ հուշեր 19-րդ դարասկզբի Ղարաբաղի, Նախիջևանի, Երևանի, Էջմիածնի մասին» հոդվածը (թարգմանություն ֆրանսերենից), «Ռիչարդ Դորմեթ. Հանճարն արքայի» (Արշիլ Գորկու մասին, թարգմանություն անգլերենից), «Ժողովրդական մի ասացվածքի դրսևորումը «Ավեստայում» (առաջաբան, թարգմանություն ֆրանսերենից) և այլն: Օտար լեզուների իմացությունը Դոլուխանյանին օգնում է նկատելու հայ և այլոց մշակութային առնչությունները գրական, պատմագիտական և գեղարվեստական ասպարեզներում: Նա վաղուց կողմնորոշվում է այն համընդհանուր ճշմարտությամբ, ըստ որի, հայոց հոգևոր աշխարհը համաշխարհային ամբողջության մի մասն է:

Լինելով երկարամյա և հմուտ դասախոս՝ Ա. Դոլուխանյանը քաջ գիտակցել է նաև դասագրքերի կարևորությունը ուսումնառության ընթացքում և սեփական փորձից ելնելով՝ ստեղծել մի քանի պրակտիկ ձեռնարկներ. «Հայ գրականության դասավանդման մեթոդիկա», «Հայ գրականության պատմություն. Հին և միջնադարյան գրականություն», «Հայ ժողովրդական

բանահյուսություն», «Դրվագներ հայ գրաքննադատական մտքի պատմությունից»:

Չափազանց բազմաբովանդակ են գրականագետի հոդվածները, որոնցում շեշտը դրվում է հին և նորագույն գրականության ու գիտության, մշակութային ու լուսավորչական կայուն, այսօր էլ օգտակար արժեքների վրա: Շատ հոդվածներ պանծացնում են անցյալի դեմքերի կյանքն ու գործը, որ երախտիքի բարոյական տուրք է մեր երախտավորներին: Աչքիս առջև են նաև տասնյակ հոդվածներ ժամանակակիցներիս գրվածքների վերաբերյալ, որոնցից ոչ բոլորում է չափ ու չափանիշ պահպանվում, սակայն այս սահմանախախտումը պայմանավորված է Ա. Դոլուխանյանի բարի էությանը, այստեղ նրան որոշ չափով «չարությունն» է պակասում:

Ա. Դոլուխանյանը բազմիցս եղել է արտասահմանում, սակայն ոչ որպես շատերի պես պարզ գրոսաշրջիկ, այլ գիտական նպատակամղվածությամբ՝ այցելել գրադարաններ, թանգարաններ, մատենադարաններ, որտեղ հնարավոր է հայկական մշակույթի հետքեր լինեն: Եվ գտնում է այդ հետքերը: «Ուխտագնացություն դեպի Արևմտահայաստան» և «Հունաստանի պատմական հուշարձաններն այսօր» հրապարակումներում բացահայտվում է մի աշխարհատարածք, որով անցել է ոչ այլ ոք, քան Մովսես Խորենացին՝ իր հանձարեղ պատմագրությունը կյանքի կոչելու:

Խոսքիս սկզբում ես հիշատակեցի Ա. Դոլուխանյանի «Հոգու և մարմնի պրոբլեմը միջնադարի հայ քնարերգության մեջ» ուսումնասիրությունը, որ նրա գիտական երկարամյա աշխատանքի կարևոր արդյունքներից է: Վերջնամասում նշել ևս մի ակնառու հաջողություն. նա միանձնյա մտահղացավ և իրականացրեց «Եվրոպայի հայագետներ» մատենաշարը վեց գրքի հրատարակությամբ՝ ընդգրկելով Ֆելիքս Նևի, Մարի Ֆելիսիտե Բրոսսեի, Վիկտոր Լանգլուայի, Էդուարդ Դյուլո-րիեի, Ֆրեդերիկ Ֆելդիի և Ֆրեդերիկ Մակլերի հայագիտական ժառանգությունը, որը մեծավ մասամբ անծանոթ էր Հայաստանում: Մենք՝ հայերս, ակնկալում ենք, սիրում, որ օտարները մեզ ուշադրություն դարձնեն, հաճախ էլ նեղանում ենք, որ անտարբեր են մեր պատմությանն ու ճակատագրին, իսկ մենք, ասացեք խնդրեմ, մի շտ ենք ուշադիր այլոց հանդեպ: Կասեմ՝ ոչ: Ա. Դոլուխանյանի այս գիտական նախաձեռնությունը՝ արժանին հատուցել լուսավոր եվրոպացիներին, որոնք տեսան ու գնահատեցին հայ ժողովրդի միտքն ու գրական մշակույթը հին աշխարհի նորացող ժամանակներում, լրացնում է մեր բացթողումը և ունի բարոյական անգնահատելի արժեք:

Բոլորս գիտենք, Ա. Դոլուխանյանը հայ արդի գրական կյանքում կարևոր ներկայություն է: Նրա էություններն ու հոդվածներն աչքի են ընկնում լայն տեղեկացվածությամբ, սիրով ու պատասխանատվությամբ, դրականը և առաջադեմն ընթերցողին հասցնելու ձգտումով:

Ա. Դոլուխանյանը հասարակայնորեն գնահատված գրականագետ է և ճանաչված դասախոս, պարզաստրվել է Մովսես Խորենացի բարձրանուն մեղալով, արժանացել «Ֆ. Նանսենի ոսկե հուշամեդալի», ՀԳՄ «Գրական վաստակի համար», «Նիկոլ Աղբալյան», «Խաչատուր Աբովյան» մեդալներին: Իսկ անցյալ տարի ընտրվեց Հայաստանի գիտությունների ազգային

ակադեմիայի թղթակից անդամ՝ գրականագիտության մարզում ունեցած ակնա-
ռու վաստակի համար:

Կյանքը դեռևս Աելիտա Դոլուխանյանի առջև է, գիտության ճանապարհին՝ ան-
վերջ, որը նա շարունակելու է անցնել նույնպիսի սիրով ու արժանապատվորեն:

ՆՈՐԱՅՐ ԱԴԱԼՅԱՆ